

ՄԱՍԼՈ ՀԱՐՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

16 մարտի, 2015թ.

ԵՆԲ-ն աջակցում է Հայաստան-Վրաստան բարձր լարման էլեկտրահաղորդման գծի կառուցմանը

Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) 10 միլիոն եվրոյի չափով ֆինանսավորում է տրամադրում Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գծի և բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի կառուցման համար: Նոր էներգետիկ ենթակառուցվածքը կխորացնի տարածաշրջանային ինտեգրման գործընթացը՝ խթանելով երկու երկրների միջև էներգետիկ առևտուրը, ինչպես նաև Հայաստանին ու Վրաստանին կրնձեռի Եվրոպայի էլեկտրաէներգիայի շուկաներ մուտքի ավելի մեծ հնարավորություն:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է Վրաստանի սահմանին մոտ գտնվող Այրում քաղաքում (Հայաստան) կառուցել բարձր լարման հաստատուն հոսանքի նոր փոխակերպիչ կայան, ինչպես նաև կառուցել էլեկտրահաղորդման գիծ երկու երկրների միջև: Ծրագրի նպատակն է անվտանգ և տնտեսապես շահավետ եղանակով բավարարել էլեկտրաէներգիայի աճող պահանջարկը:

Ծրագրի իրականացման համար ֆինանսական աջակցություն են տրամադրել նաև այլ կառույցները. Գերմանիայի կառավարության անունից 85.2 միլիոն եվրոյի վարկային աջակցություն է տրամադրել «KfW Bankengruppe» առաջատար ֆինանսավորող կառույցը, 10 միլիոն եվրոյի դրամաշնորհ է տրամադրվել ԵՄ Հարևանության ներդրումային գործիքի (ՀՆԳ) շրջանակում, ինչպես նաև հատկացումներ են կատարվել Հայաստանի (1.5 միլիոն եվրո) և Վրաստանի (6.6 միլիոն եվրո) սեփական միջոցներից:

Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանը նշել է. *«Էներգետիկայի ոլորտի զարգացումը խիստ կարևոր է Հայաստանի տնտեսական աճի համար: Այդ առումով մենք բարձր ենք գնահատում ԵՆԲ-ի և KfW-ի համագործակցությունը ծրագրի աջակցության նպատակով երկարաժամկետ վարկերի տրամադրման, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովի պատրաստակամությունը Հարևանության ներդրումային գործիքի շրջանակում դրամաշնորհի տրամադրման հարցում: Հուսով ենք, որ ծրագրի համար գործադրված մեր համատեղ ջանքերը կծառայեն իրենց նպատակին՝ հուսալի էներգահամակարգի ապահովմանը»:*

«Այս ծրագիրը ԵՆԲ-ի, տարածաշրջանային կողմերի, Եվրոպական հանձնաժողովի և KfW-ի միջև գերազանց համագործակցության օրինակ է: Անվտանգ և հուսալի էներգամատակարարումն էապես կարևոր է Հայաստանի և Վրաստանի բնակչությունների կենսամակարդակի բարձրացման համար: Ծրագիրը նաև կխթանի տարածաշրջանային առևտուրը, հիդրոէլեկտրաէներգիայի օգտագործման ներուժը, ինչպես նաև կնպաստի օտարերկրյա ուղղակի ներդրումների իրականացմանը՝ օտարերկրյա ներդրողներին հուսալի էլեկտրամատակարարում ապահովելու միջոցով»,- իր խոսքում նշել է ԵՆԲ-ի փոխնախագահ, ԵՆԲ-ի՝ Հայաստանին տրամադրվող վարկային աջակցության հարցերով պատասխանատու Ուիլիելմ Մոլթերերը:

KfW-ի՝ Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Եվա Ուիթթըր նշել է. *«Հայաստանի և Վրաստանի էլեկտրացանցերի միացման միջոցով լրացվում է տարածաշրջանային էներգահամակարգում առկա բացը: Այս քայլը մասնավորապես կնպաստի Հայաստանի էներգետիկ անվտանգության բարձրացմանը: Որպես առաջատար ֆինանսավորող կողմ՝ մենք ուրախ ենք, որ ԵՆԲ-ն, Եվրոպական*

հանձնաժողովը և KfW-ն իրենց ուժերն են համախմբում աջակցություն ցուցաբերելու այս կարևոր ծրագրի իրականացման համար»:

ԵՄ դեսպան Տրայան Հրիսթեան հաստատել է, որ. «ԵՄ-ն պատրաստակամ է աջակցել Հայաստանի քաղաքացիների հիմնական կարիքների բավարարման, մասնավորապես, արդյունավետ էլեկտրացանցերի միջոցով կայուն էներգամատակարարման հնարավորության ապահովման հարցում»:

Ընդհանուր տեղեկություններ

ԵՆԲ-ն՝ Եվրոպական միության բանկը, ԵՄ Խորհրդի և Եվրոպական խորհրդարանի՝ Արևելյան հարևանության երկրների մանդատի ներքո ֆինանսավորում է տրամադրում Հայաստանում ծրագրերի իրականացման համար: 2014-2020թթ. մանդատի շրջանակներում, ԵՆԲ-ն կարող է ԵՄ-ի երաշխիքով մինչև 4.8 միլիարդ եվրոյի ֆինանսավորում տրամադրել ինչպես ԵՄ-ի, այնպես էլ նրա Արևելյան հարևանների շահերից բխող ծրագրերի աջակցության նպատակով: Աջակցության ոլորտները ներառում են՝ մասնավոր ոլորտի զարգացում, սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներ, կլիմայի փոփոխություն:

Ի լրումն վերոնշյալի, ԵՆԲ-ն նախատեսել է 3 միլիարդ եվրո բյուջեով Հարևանության ֆինանսավորման գործիք՝ Հարևանության երկրներին ուղղված աջակցությունն ընդլայնելու նպատակով:

ԵՆԲ-ի՝ Հայաստանին ուղղված վարկային աջակցության հանձնառությունը, ներառյալ վերոնշյալ ծրագիրը, կազմում է մոտ 212 միլիոն եվրո: Աջակցությունն իրականացվում է բազմաոլորտ ներդրումային փաթեթով, որը կարևորում է երկրի զարգացումը հետևյալ բնագավառներում՝ տրանսպորտ, հասարակական տրանսպորտ, էներգետիկ և ջրային ոլորտների ենթակառուցվածքներ, փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) նախաձեռնությունների անուղղակի ֆինանսավորում՝ ԵՆԲ-ի գործընկեր ֆինանսական հաստատությունների միջոցով:

Կոնտակտային տվյալներ մամուլի հարցերով դիմելու համար՝

Dušan Ondrejčka, d.ondrejcka@eib.org, հեռ.՝ +352-4379-83334

www.eib.org/press, Մամուլի հարցերով գրասենյակ՝ +352 4379 21000, press@eib.org